

Իսթանպուլի եւ Թուրքիոյ  
Հայ Կաթողիկէ Առաջնորդութիւն

Յայտարարութիւն

Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան որ ի Պէյրութ, 17 Հոկտեմբեր 2024 թուակիր պաշտօնական յայտարարութենէն քաղելով կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին եւ մեր երկրի հասարակութեան, որ Նախագահութեամբ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Տէր Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Պատրիարքի եւ մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ Արհիպպատի Սիւնհոդոսական Հայրերու 2024 թուականի Սեպտեմբեր 9-էն 12, Չմամառու Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ Արտաքոյ կարգի ընտրական Սիւնհոդոս, որու ընթացքին ընդունուեցաւ Պոլսոյ Հայ Կաթողիկէ Աւագ Թեմի Առաջնորդ Արհիպպատի Տէր Լեւոն Արք. Չէքիեանի տարիքի բերմամբ ներկայացուցած հրաժարականը:

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ տնօրինութեամբ սոյն թուականի Հոկտեմբեր 2-ին, մինչ այս նոյն Աւագ Թեմին մէջ ծառայող Գերյարգելի Հայր Վարդան Ծ. Վրդ. Գազանճեանը անուանուեցաւ Պոլսոյ Հայ Կաթողիկէ Աւագ Թեմին «Պատրարքական Կառավարիչ»:

Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը երախտագիտութիւն կը յայտնէ Արհիպպատի Տէր Լեւոն Արք. Չէքիեանին առաքելաջան եւ պտղաբեր Առաջնորդութեան համար եւ կը շնորհաւորէ Գերյարգելի Հայր Վարդան Ծ. Վրդ. Գազանճեանը՝ մաղթելով անոր բեղուն առաքելութիւն եւ հայցելով Չմամառու Տիրամօր բարեխօսութիւնը իր անձին եւ Պոլսոյ Հայ Կաթողիկէ Աւագ Թեմի հաւատաւոր ժողովուրդին:

Իսթանպուլ՝ 19 Հոկտեմբեր, 2024

Դիւան Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի

